




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Լ. ԽՐԻՄԻՆ

Մ Ե Ր

Ո Դ Ա Յ Ի Ն

Ն Ա Վ Ա Տ Ո Ր Մ Ը

623.75

hi-99

Պ Ե Տ Շ Ր Ա Տ — Ռ Ա Չ Մ Շ Ր Ա Տ Բ Ա Ժ Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

1932

04 AUG 2010

623.75
m-98

Վ. ԽՐԻՊԻՆ

ՄԵՐ ՈՂԱՅԻՆ
ՆԱՎԱՏՈՐՄԸ

27.11.8

89181

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1932

14 MAY 2013

13.476

Գլավխիտ 465 (Բ)
Հրատարակ. 2169
Պատվեր 1147
Տիրած 3000

Սերգեյեֆ Լ. ԹՈՎՄԱՆՅԱՆ Ե. ԼԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանձնված է արտադրության
Մասնագրված է տպելու 23.10.32 թ.



37986-62

ԻՆՁՈՒ՞ ՅԵ ՄԵՁ ՀԱՐԿԱՎՈՐ ՈՂԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄ

Բուրժուազիայի և իր ծառա սողիալ-ֆաշիստների լկտի, հակա-խորհրդային սանձարձակ բամբասանքը, լայն կազմակերպված վնասարարության սխառմի միջոցով մեր շինարարությունը վիժեցնելու փորձերը, ԽՍՀՄ-ի վրա զինված կերպով հարձակվելու պատրաստու-թյունը, — այս բոլորը վկայում են այն, Վոր կապիտալիստական աշ-խարհը չի ցանկանում և չի կարողանում հաշտվել համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրեղադեղին խորհրդային Միության դո-յություն հետ: Կապիտալիստական յերկիրներն ուժեղ կերպով զինվում են: 1930 թվից սկսված կապիտալիստական տնտեսության աննախըն-թաց ճգնաժամը վուչ միայն չթուլացրեց սպառազինումների տենդը, այլ ընդհանրապես ուժեղացրեց այն: Բուրժուական յերկիրների ռազ-մական արդյունաբերությունը, ստեղծելով ավերի և բնաջնջման նո-րանոր բիջոցներ՝ աշխատում է կատաղի տեմպերով:

Այսպես պատերազմի համար պատրաստվող դանազան միջոցների թվում առանձին տեղ է զբաղում ավիացիան: Մրա դարգացումը վեր-ջին տարիներս առանձնապես աչքի յե ընկնում: Այսպես՝ Ֆրանսիայում չարքի մեջ է 1730 դործող ռազմական ինքնաթիռ, ՀԱՄՆ-ում՝ 1600, Անգլիայում՝ 1560 և Իտալիայում՝ 1015: Մեր արևմտյան հարեվան-ները՝ Լեհաստանը, Ռումինիան, Լատվիան և Ֆինլանդիան ունեն 1000-ից ավելի ռազմական ինքնաթիռներ:

Ինչպես 1914-1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմի փորձը ցույց տվեց, ռազմական դործողությունների ժամանակ ռազմավերի թիվն առանձնապես արագ է աճում: Անցած պատերազմի չորս տարվա ընթացքում կուլող յերկրների ռազմավերի թիվն աճեց 700 ինքնաթիռից մինչև 11,000-ի, այսինքն՝ ավելացավ 15½ անգամ:

Իմպերիալիստական պատերազմից հետո ավիացիոն արտադրու-թյունն է՛լ ավելի ամրապնդվեց: Լավացավ նաև ինքնաթիռների սպա-ռազինումը և բարձրացավ նրանց թռիչքների վորակը: 1930 թ. տնտե-սական խիստ ճգնաժամի շրջանում մի չարք յերկիրներում կառուց-վեցին հսկա ինքնաթիռներ, վորոնք ողում կավելու և ցամաքի ու ջրի վրա ամեն մի կառուցվածքը ավերելու համար, կարող են վերցնել տասնյակներով դնդացիներ, թնդանոթներ, ռումբեր և այլ միջոց-ներ: Իրա հետ միասին կառուցվում են հսկա զրիթաբլներ, վորոնք իս-կական ռազմավեր են:

Հասկանալի յե, վոր ապագա պատերազմի ժամանակ ավիացիան կդառնա ահարկու դենք: Ահա թե ինչու Խորհրդային Միությունը պետք է ստեղծի պաշտպանության այնպիսի միջոցներ, վորոնք հա-

րափորութիւն տան հետ մղելու թշնամուն և պաշտպանելու մեր յերկրի թիկունքն ողային ավերիչ արշավանքներից:

Սակայն յերկրի սոցիալիստական շինարարութեան և պաշտպանութեան համար չեն միայն, վոր ավիացիան մեզ հարկավոր է:


Ողային նավատորմը մարդատար և ապրանքատար տրանսպորտի ամենազնաւոր տեսակն է կազմում: Մեր ընդարձակ յերկրում, ուր լավ ճանապարհներ դեռևս չկան, ավիացիան ամենահեռավոր ծայրամասերն իրար է կապում, հեշտացնում և մեր տնտեսական շինարարութեան հսկայական Փրոնտի կառավարումը, հնարափորութիւն և տալիս լեռների, անապատների և տալգանների վրայով մարդիկ ու բեռներ փոխադրելու:

Ահա թե ինչու Խորհրդային Միութեան ողային նավատորմը բաղկացած է ողային ռազմական ուժերից, վորոնք ԲԳԿԻ-ի անջակտելի մասն է կազմում քաղաքացիական ողանավատորմի, վոր յենթարկվում է աշխատանքի և պաշտպանութեան Խորհրդին:

Ռազմաողային նավատորմը ԲԳԿԻ-ի բոլոր տեսակի ցամաքային զորքերի և ծովային նավատորմի հետ միասին պետք է պաշտպանեն Խորհրդային Միութիւնը կապիտալիստական յերկիրների ողային ուժերի հարձակումից: Քաղաքացիական ողային նավատորմը մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման հզոր միջոցներից մեկն է և գործադրում է տնտեսութեան զանազան ճյուղերում:

ԲԳԿԻ-ի ՈՂԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՇԵՐԸ ՅԵՎ ԻՐԵՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԲԳԿԻ-ի ողային ռազմական ուժերը, ինչպես և բանվորադուղացիական վողջ Կարմիր բանակը, ծնունդ են առել քաղաքացիական կռիվների բովում:



Նկ. I

Քաղաքացիական կռիվների տարիներին Խորհրդային յերկրը ավիացիոն գործարաններ չուներ: Կարմիր ողային նավատորմի համար հիմք ելին հանդիսանում ցարական բանակից մնացած հին ինքնաթիռներն ու ողազնաց ջոկատները: Չնայած ինքնաթիռների սակավութեան

նը և նույնիսկ անպետքութեանը, կարմիր ողաչունները քաղաքացիական բարձր զիտակցութեան, ռացմակն ուսուցման և կայունութեան որինակ են ցուցաբերել: Ողային Կարմիր նավատորմը մասնակցել է Յուգոսլաւի, Կոլչակի ու Վրանգելի դեմ մղած կռիվներին, ճակատել է թշնամու ինքնաթիռների դեմ՝ զնդակակոծելով սպիտակ դվարդիական հետևակն ու հեծելազորը, կապ պահպանելով առանձին զորամասերի միջև և կատարելով հետախուզական ծառայութիւն:

Կարմիր նավատորմը, ինչպես և բանվորադուղացիական վողջ Կարմիր բանակը, թեւակոխել է մարտական խաղաղ ուսուցման շրջանը: Սոցիալիստական շինարարութեան և հնգամյակի հաջողութիւնները հանգեցին այն բանին, վոր Խորհրդային Միութիւնը ներկայումս ունի ողային հզոր նավատորմ: Տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված մեր գործարանները սեփական մատորներ և ինքնաթիռներ են արտադրում: Այս բանին զուգընթաց, Խորհրդային զիտական հիմնարկներն ինքնաթիռների, կատարելագործված մատորների և սպառազինման այլ միջոցների նոր տիպեր են մշակել:

Ողային նավատորմի բաղկացուցիչ մասերն են, ավիացիան և ուղափառութիւնը: (воздухоплавание) Ավիացիան իր հերթին ստորաբաժանվում է ցամաքայինի և ծովայինի, իսկ ողաչացութիւնը՝ կապովի, ազատ գործողի և կառավարվողի (привязное, свободное и управляемое):

Ողում չարժումներ կատարելու համար ավիացիան ողաչործում է ողից ծանր՝ թռչող ապարատներ: Այդ ապարատները կոչվում են ողանավեր կամ ինքնաթիռներ:



Նկ. II

Ինքնաթիռը մի մեքենա յե, վոր իրանին ամրացրած թևեր ունի: Դեպի առաջ արագ շարժվելու դեպքում՝ թևերը հենվում են ողի հակառակ հոսանքին, և մեքենան բարձրանում է: Վորպես ուժի աղբյուր ծառայում է ինքնաթիռի իրանի կամ թևերի վրա դրվող ներկնդ շարժիչը: Շարժիչի ուժով շուտ է գալիս ողային պտուտակը: Շնորհիվ պտուտակների մեծ քանակութեան (1500-2000 պտուտ մի բոպե-

յին), պտուտակը՝ զարդացնում է ձգողական ուժ, և ինքնաթիռը վազում է գետնի կամ ջրի յերեսին ու մի Ժամում 80-100 կիլոմետր կտրելու արագություն է հասնում: Այդ արագությունը բավական է, վոր մեքենան կարողանա աստիճանաբար կտրվել գետնից, բարձրանալ և թռչել ողում:

Ինքնաթիռը կառավարվում է թևերի յերեսին և պոչի փետրավորման մոտ գտնվող շարժիչ մասերի համաձայնեցրած շարժումներով: Ինքնաթիռի տարբեր տեսակը պլաներն է: Անմոտոր ինքնաթիռն է այդ, վոր ոգտագործվում է՝ սկզբնական շրջանում յերևտասարդութանը թռիչքի արվեստին սովորեցնելու համար:

Պլաները կարող է թռչել միայն դրսից հաղորդվող ուժի շնորհիվ: Սովորաբար այս նպատակին ծառայում են ուետինե յերկար պարաններ, վորոնք այնպես են ձգվում, վոր ամրացրած տեղից աղատված պլաներն իսկույն սկզբնական արագություն է ձեռք բերում և թռչում է: Պլաների հետագա թռիչքը կարող է յերկար տևել, յեթե այն ընկնում է ողում առաջացած ուժեղ հոսանքների մեջ, կամ արագ կերպով ընդհատվում է և սկաներն իջնում է: Առաջին դեպքում թռիչքը կոչվում է սավառնող, յերկրորդ դեպքում՝ ճախրող (планирующий):



Նկ. III

Ի հակադրություն ավիացիայի՝ ողադնացության մեջ գործ են ածվում ողից քեքև սպարատներ—անրոստատներ և դիրիժաբլներ: Աերոստատը թռչող անմոտոր սպարատ է և բարձրանում է ողի

մեջ շնորհիվ այն բանի, վոր նրա թաղանթի մեջ ողից թեթև գազ է լցվում: Աերոստատները չափազանց տարբեր գործածություն ունեն: Ռազմական գործում այսպես կոչված կապովի անրոստատներ են գործածվում, վորոնք պարանով (трос) կապվում են հատուկ ավտոմեքենայի (ավտո-լեբեդկա): Այդ անրոստատը թշնամուն և կովի դաշտը դիտելու համար է: Գիտա-հետախուզական աշխատանքում և սպորտային նպատակների համար գործ են ածվում ազատ անրոստատներ, վորոնք հայտնի յեն «Ողապարիկ» անունով: Այդ սպարատներն ողի մեջ շարժվում են՝ նայած քամու ուղղության և արագության: Բարձրանալու կան իջնելու համար անրոստատները դուրս են թափում իրենց պահեստի ծանրությունը (балласт), կամ բաց են թողնում գազի մի ասը, վորը և հնարավորութոյն է տալիս ողաշուշին վոչ միայն աղբել թռիչքի բարձրության վրա, այլ յերբեմն նույնիսկ փոխել թռիչքի ուղղությունը և իր սեփական ցանկությունը քնարել իջնելու վայրը:

Դիրիժաբլը ղեկավարվող ողանավ է և ունի մեկ կամ մի քանի մեքենաներ, վորոնք շարժման մեջ են դնում ձգող կամ հրող ողային պտուտակները: Պտուտակների աշխատանքը դիրիժաբլին այնպիսի առաջընթաց արագություն է տալիս, վոր բավական է հակառակ քամու մեծ ուժը հաղթահարելու համար: Այս պատճառով դիրիժաբլը կարող է թռչել ամեն ուղղությամբ: Դիրիժաբլն ողի մեջ բարձրացնելու համար պահեստի բեռան (ավազ կամ ջուր) մի մասը պետք է դուրս թափել: Իջնելու համար բաց է թողնվում գազի մի մասը, վորի շնորհիվ փոքրանում է դիրիժաբլի ծավալը և պակասում սարվող ուժը: Դիրիժաբլի ունեցած առաջընթաց արագությունը մասամբ հնարավորություն է տալիս դիրիժաբլին չափել թռիչքի բարձրությունը՝ առանց բալլաստ և գաղ փչացնելու:

Դիրիժաբլներն այժմ մեծ նշանակություն են ստանում իբրև ողային տրանսպորտի միջոց առանձնապես մեծ տարածությունների համար և վորպես Փրոնտից հեռու գտնվող ռազմական ու տնտեսական խոշոր նշանակություն ունեցող կետերի, յերկաթուղային հանգույցների, ռազմական գործարանների, ելեքտրոկայանների, արդյունաբերական կենտրոնների, քաղաքների և այլ կետերի վրա հարձակվելու հղոր միջոց:

Իսկ ԽՍՀՄ-ի ինդիւրներ և ծառացած ԲԳԿԻ-ի ողային ռազմական ուժերի առաջ:

Ռազմատղային նավատորմը գորքի առանձին տեսակն է, ինչպես՝ հետեակը, հեծեյազորը և այլն և իր մարտական աշխատանքը կատարում է ցամաքի գորքերի և ծովային նավատորմի հետ փոխադարձ և սերտ գործակցությամբ: Դրա համար նա գործում է յերկրային գորքերի հետ միասին: հարձակվում է թշնամու հեռավոր թիկունքի վրա, ռաբակոծում և գնդակահոծում է թշնամու գորքերին, վորոնք սղնություն են հասնում իրենց զորամասերին, քարուքանդ և անում ռազմական նավահանգիստներ, դրոհում է թշնամու ծովային նավերի վրա, պաշտպանում է իր գորքերը թշնամու ինքնաթիռների հարձակումից, տեղափոխում է գորքեր, վիրավորներ, ռազմամթերք և այլն:

Ավիացիայի բաղմական վողջ աշխատանքի նպատակն է՝ կոտրել թշնամու դիմադրությունը, վռնչացնել նրա կենդանի ուժը, քանդել ամրությունները և այսպիսով ոգնել իր յերկրային դրժքերին:

Ողային բաղմական ուժերի առաջ ծառացած դանազան մարտական ինդիքներն, իհարկե, հաջող կերպով չեն կարող իրականացվել միևնույն ափսի ինքնաթիռի կողմից: Որինակ՝ այն ինքնաթիռը, վորը հետախուզություն է կատարում կռվի դաշտում վոչ հեռու իր ողանա-վակայանից (аэродром), վառելանյութի մեծ պաշարի կա-րիք չի գգում: Սակայն նա պետք է կարողանա լավ գնդակակոծել և ուժեղ կերպով զինված պաշտպանվել թշնամու կործանիչներին: Ընդ-հակառակը՝ այն ինքնաթիռը, վորը պիտի հարձակվի հեռավոր թի-կունքների վրա, պիտի ունենա վառելանյութի և ուժերի մեծ պա-շար:

Ուստի ավիացիան, վոր ԲԳԿԻ-ի ողային ուժերի հիմքն է կադ-մում, զինված դանազան տեսակի ինքնաթիռներով և բաժանվում է՝ հետախուզ, գրոհիչ, կործանիչ, ռմբակիչ և ոժանդակ մասերի:

ՀԵՏԱՆՈՒԹՅ ԱՎԻԱՑԻԱ

Ավիացիայի գլխավոր դերերից մեկը ողային հետախուզությունն է: Հետախուզությունը շատ կարևոր նշանակություն ունի բաղմական դործում: Զորամասերի աչքն ու ականջն է այն, վոր շարունակ աշ-խատում է իմանալ, թե վորտեղ է թշնամին, ինչ ուժեր ունի և ինչ է մտադիր անելու: Պարզ է, վոր թռիչքի մեծ արագությունն անեցող ինքնաթիռը կարող է կարճ ժամանակում ահազին տարածություն թռչել և վերելից դիտել թշնամուն, նրա թիվն ու սպառազինումն:


Ողային հետախուզության համար առանձին հետախուզ ավիա-ցիա կա: Ժամանակակից հետախուզ ինքնաթիռներն աշխատում են վոչ միայն կռվի դաշտում ու մոտավոր թիկունքում, այլ և մտնում են թշնամու սահմանների խորքը, յերկաթգծերը, արդյունաբերական կենտրոնները, բաղմական և քաղաքական կարևոր նշանակություն ունեցող շրջանները և այն հետախուզելու համար: Հետախուզ ինքնաթիռների հավաքած տեղեկությունները կարող են արժեք ունենալ հրամանատարական տարբեր որդանների համար: Նայած ողա-յին հետախուզության քնույթին ու նշանակությունը՝ հետախուզ ա-վիացիան բաժանվում է գորակալ, բանակային և ցախատային մասերի:

Զորական ավիացիան դործում է զվիղիականների ու կորպուսների կազմի մեջ և սպասարկում է դորքերի անմիջական շահերը նրանց հետ մասնակցում է կռվին և հետախուզում է թշնամու դրժքերը:

Բանակային ավիացիան սպասարկում է բանակների շտաբները: Հետախուզելով թշնամու թիկունքը՝ նա հայտնաբերում է, թե ինչ-պես է ընթանում թշնամու դրժքերի բաղմական անդի դործը, վո՞րտեղ են համախմբվում թշնամու գլխավոր ուժերը, ուր են տեղափոխվում, ողնական դորամասերը, վորտեղ և վորքան պահեստներ, դատարկման կայաններ կան և այլն:

Ճակատային ավիացիան նշանակվում է թշնամու թիկունքի խոր-քում ողային հետախուզություն կատարելու համար:

Ծովի վրա դործ է անվում մոտավոր և հեռավոր հետախուզու-թյան գննիչ ավիացիան (բաց ծովում): Հետախուզությունը ժամանա-կին պետք է հայտնաբերի թշնամու նավատորմի յերևալը և հնարավո-րություն տա իրենց ուժերին պատրաստվել յերևան յեկող թշնամու գնձ կռվելու համար: Բացի այդ, ծովային հետախուզները պարզում են ծովային նավահանգիստների, ափերի ամրությունները և այլ վայրերի աշխատանքն ու դրությունը:



Նկ. IV


Հետախուզ ավիացիան խոշոր նշանակություն ունի առանձնապես դորաշարժական և շարժուն պատերազմի ժամանակ, յերբ դրությունը ճակատում արագ կերպով փոխվում է, և յերկրային հետախուզու-թյունը թշնամու մասին ժամանակին տեղեկություններ չի կարող հա-վաքել: Իմպերիալիստական պատերազմի և առանձնապես քաղաքա-ցիական կռիվների ժամանակ ավիացիան հաճախ հանդիսանում էր գլխավոր և յերբեմն միակ հետախուզ միջոցը: Բացի այդ ավիացիան հետախուզությունը: Ուստի և իմպերիալիստական պատերազմի ժա-մանակ բաղմական վոչ մի լուրջ դործողություն չէր սկսվում առանց թշնամու մանրագնին ուսումնասիրության՝ ողի միջից, գլխավորա-պես նրա դիրքերը, թիկունքի կետերը, յերկաթգծերը և այլն լուսա-նկարելու ողնությունը: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ինքնաթիռներն ապացուցելին իրենց բաղմական աշխատանքի արժե-քավությունը:

Որինակ՝ գններալ Մամոնտովի հեծելազորի ասպատակություն-ների ժամանակ, նրա շարժումները դիտելու համար, ավիացիոն զայրոցներից և շտաբներից ստեղծվելին ավիացիայի առանձին մասեր: Այդ մասերը շարունակ հսկում էին Մամոնտովի հեծելազորին և ժա-մանակին հաղորդում էին կարմիր հրամանատարությանը՝ ճանա-պարհներին թշնամու ողղությունը փոխելու մասին: Կարմիր հե-

տախույզ ավիացիան մեծ ոգուտ տվեց սալիտակ լեհերի և այլ ճակատա-
ներում տեղի ունեցած կռիվների ժամանակ:

Բացի այդ ավիացիան դործում է հրետանու հետ միասին: Նա
հրետանային նպատակներ է հետախուզում, ղերքեր է ընտրում, քար-
տեղներ է ուղղում և կանոնավորում ու ուղղութիւն է տալիս իր հրե-
տանու կրակին: Միեւնույն ժամանակ ավիացիան լայն կերպով նկա-
րում է թշնամու դասավորումը և առանձնապես ամրացրած զէր-
քերը:

Բացի հետախուզելուց և հրետանու հետ միասին դործելուց,
ղննիչ ավիացիան կատարում է նաև ղեկավարման և կապի աշխա-



Նկ. V

տանք: Պատերազմի ժամանակ զորավարները հաճախ կտրվում են դիտա-
վոր ուժերից, և հրամանատարության կապը մյուս մասերի հետ ընդ-
հատվում է: Այսպիսի դեպքերում ավիացիան կարող է արագ կերպով
գտնել իրենց զորքերը և նրանց հասցնել հրամանատարության կար-
գադրութիւններն և մինչև անգամ ռազմամթերք: Որինչև 1919 թ.
քաղաքացիական կռիվների ժամանակ ինքնաթիռները կանոնավոր կապ
էին պահպանում Ուրալի քաղաքի կայազորի հետ, վոր կտրված էր
Կարմիր բանակից: Ինքնաթիռները կարգադրութիւններ էին հաս-
ցնում այնտեղ, հաղորդում էին մյուս ճակատների դրութիւնը և ի-
մանում Կարմիր Ուրալի պաշտպանողների կարծիքները: Նրանք
նույնպիսի արժեքավոր աշխատանք էին տանում նաև արևելյան ճակա-
տի ու Թուրքեստանի միջև յեղած կապի նկատմամբ: Մեր թշնամի-
ներն ավիացիան դործ էին անում Դոնի մարզի և այլ վայ-
րերի հակահեղափոխական բանդաների հետ կապ պահպանելու նպա-
տակով և այլն:

Վերջապես՝ հետախույզ ավիացիան առանձնապես արժեքավոր

միջոց է թշնամու զորքերի և բնակչության մեջ ագիտացիոն աշխա-
տանք կատարելու և թշնամու ճակատում ու թիկունքում ագիտացիոն
զրահանութիւն դրելու համար, վորի ոգնութեամբ կապիտալիստնե-
րի բանակի բանվորներն ու դշուկացիները հասկանում են այդ պատե-
րազմի նպատակները, բուրժուազիայի թալանչիական նպատակները և
այլն:

Նայած ռազմական խնդիրներին և իրադրութեան պայմաններին,
մեր հետախույզ ավիացիան ղեկավար է զանազան ինքնաթիռ հետա-
խույզներով: Մի տեսակը նախատեսվում է զորական ավիացիան սպա-
ռազինելու համար, վորը մանրակրկիտ կերպով ղիտում է յերկիրը
փնտռելով կռիվ դաշտում տարբեր տեղերում ցրված փոքրիկ նշան-
ներ: Այդ ինքնաթիռը դործում է իր ուղակայանի մոտերում, ուստի
և յերկարատե թռիչքի համար մեծ արագութեան ու վառելանյութի
մեծ պաշարի կարիք չի դրում: Բայց այդ ինքնաթիռը պետք է ունենա
լավ շրջահայեցողութիւն և ուժեղ սպառազինութիւն, վոր կարողա-
նա պաշտպանել թշնամու կործանիչներին:

Հետևյալը հետախուզութիւն կատարող ինքնաթիռներն այլ հա-
կութիւն պետք է ունենան, քանի վոր թռիչքի արագութեանն ու
տեղութիւնը նրանց համար շատ մեծ նշանակութիւն ունեն:

Մեր ռազմական ուժային ուժերը զինված են այնպիսի հետախույզ-
ներով, վորոնք զգալի չափով զերազանցում են արտասահմանյանը:
Մոտ ժամանակներս, 1930 թ. հոկտեմբերին և նոյեմբերին, մեր հե-
տախույզ ինքնաթիռները Պարսկաստանում (Թեհրանում) մասնակ-
ցեցին միջազգային կոնկուրսին, մրցեցին Ֆրանսիական Պոտեղ 25 մի-
տեմի սովետականների հետ, վորոնցով այժմ ղինված են Ֆրանսիական
և լեհական ավիացիան: Պարզվեց, վոր բոլոր առաջադրած վարժու-
թիւններն մեջ՝ առաջին տեղը դրավեց մեր P-5 հետախույզը: Ահա-
վասիկ մեր հաջողութիւնների արդյունքները կոնկուրսում:

Վ ար ժ ու թ յ ու ն	Մեր P-5 հետա- խույզը	Պոտեղ 25
Յերկարատե թռիչքի միջին արտա- դրութիւնը (1200 կիլոմետրով) . .	200 կիլոմ. մեկ ժամում	168 կիլոմ. մեկ ժամում
Միջին արագութիւնը ավելի կարճ ուղեցույցով	210 կիլոմ. մեկ ժամում	174 կիլոմ. մեկ ժամում
5000 մետր բարձունքի հասնելը . .	26 րոպե 36 վայրկ.	27 րոպե
Թռիչքի բարձրութեան վերջակետը	6700 մետր	6000 մետր

Հետախույզներն ունեն 3-4 դնդացի, վորոնցից 1-2-ը անշարժ են
դրված և կրակում են դեպի առաջ, իսկ մյուս 2-ը տեղավորված են
չլուսավոր հարտարանի (установка) վրա՝ դեպի աջ ու ձախ:

վեր ու յետ կրակելու համար: Դեպի առաջ կրակվում է հատուկ մե-
խանիզմի միջոցով, վորի ողնությամբ մեկուսացվում է զնդացիներն այն
մոմենտին, յերբ կրակելիս ստուտակի թաթերը մոտենում են զնդա-
կի թուշոգ գծին (այսպես կոչված սինխրոնի մեխանիզմ): Գնդացի-
ներին բացի, հետախույզներին տրվում է լուսանկարչական ապարատ,
ռադիո կայաններ, յերկրից հաղորդադրություններ բռնելու գործիք-
ներ (КОШКИ), հաղորդադրություններ ցրելու ժապավեններ և
այլ հարմարություններ:

ԿՈՐԾԱՆԻՉ ԱՎԻԱՑԻԱ

Թշնամու ինքնաթիռները, անրոստատները և դերիժարները դեմ
կռվելու համար ծառայում է կործանիչ ավիացիան: Կործանիչները
զորքն ու թիկունքը պաշտպանելով ողային թշնամուց՝ ողնում են ի-
րենց ավիացիային մարտական աշխատանք կատարելու:

Ավիացիայի զարգացման զուգընթաց, ողային պայքարն անընդ-
հատ բարդանում է: Ողային կռիվները պետք է վարել գիշեր ու ցե-
րեկ, ճակատում ու թիկունքում, ծանր ու թեթև սալառանակներով,
վորոնք սպառազինված են լինում հեռաձիգ՝ թնդանութներով և մեծ տրա-
մաշտիկի զնդացիներով: Այս բոլորը հանդում են այն բանին, վոր
կործանիչ ավիացիան զինված է տարբեր սպառազինություն ունեցող
ու տարբեր տիպի ինքնաթիռներով: Առաջին տեղը բռնում են թեթև,
մի տեղանի և արագընթաց կործանիչները, վորոնք ամուր հաստատված
զնդացիներից միայն դեպի առաջ են կրակում: Այս կործանիչները
գործում են գլխավորապես կռվի դաշտի վրա և իրենց թիկունքում
ողից պաշտպանելով իրենց զորքն ու ավիացիան: Թշնամու գործերի
զաստիարման խորքում կռվելու համար գործադրվում են յերկտեղ և
բազմատեղ կործանիչներ, վորոնք մեծ խմբերով են կռվում և զինված
են ավտոմատիկ գեներով վոչ միայն մոտիկ ու միջին, այլև հեռու տա-
րածության վրա (500 և ավելի մետր) կրակելու համար:

Առաջին կործանիչ ինքնաթիռները յերևան են յեկել 1915 թվին
և 1914—1918 թ. թ. ինմպերիալիստական պատերազմի ժամանակ մեծ
չափով տարածվեցին: Կործանիչներն առանձնապես ուժեղ թռիչք կա-
տարեցին այն ժամանակ, յերբ ավիացիոն թեթև և հզոր մոտորները յե-
րեկան յեկան (մոտավորապես 1928—1929 թ. թ.): Ներկայումս հա-
մաշխարհային կործանիչներից լավագույններն ունեն 300—325 կիլո-
մետր արագություն մեկ ժամում և զինված են դեպի առաջ կրակող
4 զնդացիներով:

Իհարկե՝ այս հատկությունները վերջնական համարել չի կարելի,
վորովհետև արագընթաց նորագույն ինքնաթիռներն (առանց սպառա-
զինման) արդեն ցուցաբերել են 575 կիլոմետր արագություն մի ժա-
մում:

Մեր կործանիչներն իրենց թռչելու և մարտական հատկությամբ
առաջնակարգ տեղերից մեկն են բռնում:

ՌԻԲԱՉԻԳ ԱՎԻԱՑԻԱ

Ռմբաձիգ ավիացիան հանդիսանում է վորպես ողային հրետանի
և զինվելու համար ունի ուժավ, վորի միջոցով թշնամու թիկունքում
կործանում է զանազան ռազմական կառուցվածքներ, պահեստներ,
աներդրոմներ, յերկաթուղային կամուրջներ ու կայարաններ:

Բացի այդ, ռմբաձիգները կարող են գործել անմիջական կապ պահ-
պանելով յերկրային զորքերի հետ՝ ողի միջից կռվի դաշտում հար-
վածելով թշնամու զորքերին (գլխավորապես հրետանին և տանկերը):
Ծովի վրա ռմբաձիգ ավիացիան կռիվ է մղում թշնամու նավատորմի
դեմ, քարուքանդ է անում կարևոր նավահանգիստները և ծովային բա-
ղաները, ուր թշնամու ծովային նավատորմն է կանգնում:

Ռմբաձիգ ավիացիան բաժանվում է յերկու մասի՝ թեթև և ծանր:
Թեթև ռմբաձիգները կարող են մոտ 500 կիլոգրամ ռազմական բեռ
վերցնել և 5—6 ժամ թռչել: Ծանր ավիացիայի սպառազինման համար
կան այնպիսի ինքնաթիռներ, վորոնք կարող են 1090—2000 կիլոգրամ
բեռ վերցնել և ավելի յերկար թռչել:

Ռմբաձիգ ավիացիան գլխավորապես գիշերն է աշխատում, վոր-
պեսզի զերծ մնա թշնամու կործանիչների և զենիտային հրետանու հա-
կադործուներթյունից, վորոնք ցերեկն ավելի վտանգավոր են:

Վերջին տարիներս ռմբաձիգներն ամբողջ ողային նավատորմի մեջ
առաջին տեղն են զբաղել: Ռմբաձիգ ինքնաթիռն ավելի ակտիվ հար-
ձակողական միջոցների շարքն է դասվում: Ուստի կապիտալիստական
պետություններն առանձին վճարակալությամբ ուժեղացնում են իրենց
ռմբաձիգ ավիացիան՝ բարձրացնելով ռմբաձիգ-ինքնաթիռների բեռ-
նատարությունը և թռիչքի հեռավորությունը:


Այս զենքի ուղղությամբ իմպերիալիստները մտադիր են մեր յերկ-
րին հսկայական ավերածություններ պատճառել, վորպեսզի մենք
չկարողանանք պատերազմը շարունակել: 1927—1928 թ. թ. կառուց-
ված արտասահմանյան լավագույն մեքենաներն իրենց հետ 2000 կի-
լոգրամ ռազմական բեռ են վերցնում, մինչև 180 կիլոմետր թռչելու
արագություն, 5—6 ժամվա վառելանյութի պաշար և մինչև 2000
ձիու ուժանոց մոտորներ ունին:

Ծանր ինքնաթիռների նորագույն տեսակները զգալի չափով դե-
րազանցում են այս: Սրանք ողային հսկայական նավեր են, վոր առանց
իջնելու և նոր վառելանյութ ավելացնելու, կարող են 3000—4000 կի-
լոմետր տարածություն կտրել, վերցնում են 5—10 տոնն ռազմական
բեռ և ունեն մինչև 6000 ձիու ուժ ունեցող մոտորներ:

Հասկանալի չէ, վոր այս ողանավերն առաջին հերթին ԽՍՀՄ-ին
են սպառնում: Ահա թե ինչու մենք պետք է ունենանք ուժեղ և հզոր
ավիացիա, վորը կարողանա հաջող կերպով յետ մղել թշնամու հար-
ձակումը:

Սոցիալիստական արդյունաբերության հաջող զարգացումը հնա-
րավորություն է տվել մեզ ձեռնարկել ծանր ռմբաձիգ ինքնաթիռների
արտադրությանը, վորոնց կառուցման համար պահանջվում են լավա-
գույն նյութեր, ամենաուժեղ մոտորներ և սարքավորման բազմաթիվ
գործիքներ ու սպառազինում:

Մեր զործարաններն արդեն բաց են թողնում առաջնակարգ տե-
սակի և զանազան տարողութեան ուժրածիղներ, վորոնք զգալի չափով
ուժաղացրել են ողային կարմիր նավատորմի հզորութիւնը:




Նկ. VI

ՀՐՈՍՈՂ ԱՎԻԱՑԻԱ

Հրոսողների (штурмовки) գլխավոր խնդիրը յերկրային
թշնամու վրա հարձակվելն է: Այս խնդիրն է կատար և անվում իրենց
զորքերի սերտ համագործակցութեամբ՝ կռիվը թշնամու կենդանի ուժի
դեմ հեշտացնելու համար: Հրոսողների գլխավոր զենքը բեկորային
ուռմբն է: Այժմյան ինքնաթիռները մինչև 40-50 ուռմբ են վերցնում,
վորոնցով կարող են հարվածել շատ մեծ տարածութիւն ընդող զոր-
քեր: Արշավանքի ժամանակ այսպիսի 40 ուռմբ բախական և յերկու
զումարտակ վոչնչացնելու համար: Բացի այդ, հրոսողներն ունեն
6-8 դնդացիք, վորոնք զբաղում են հատուկ շարժական հաստացների
(установки) վրա: Հրոսողները զործ են անվում հարվածելու
վոչ թե առանձին փոքրիկ նպատակներ, այլ զորքերի խոշոր կուտա-
կումներ (ուղղաթիւնի ուժանդակ զնդեր, հրետանային դիրքեր, ար-
շավող և հանգստացող զորքեր և այլն): Հրոսային գրոհները տեղի
յեն ունենում թշնամու համար հանկարծակի կերպով ամենափոքր
բարձունքից, յեթե թշնամին հրոսողներին ղեմադրելու թույլ և պատ-
րաստված, հարձակումն ինքնաթիռների համար կարող է անցնել հա-
մարյա առանց կորուստի, այնինչ յերկրային զորքերը մեծ կորուստ
կիրեն: Հրոսողների մարտական աշխատանքն առանձնապէս կարեւոր է
յերկրային գրոհի պատրաստվելու, թշնամու զորքերը հետապնդելու
և կռիվ ժամանակ թշնամու ամենափառաւոր հակահարվածները

հետ մղելու դեպքում: Ողային կարմիր նավատորմն առաջին անգամ
սկսեց հրոսային գրոհներ կատարել 1920 թ. սպիտակ լեհերի և վրան-
դելի դեմ ունեցած կռիվների ժամանակ: Այն ժամանակ հրոսողները
թշնամուն դնդակոծում էին գլխավորապէս զնդացիքային կրակով՝
100-200 մետր բարձրութեան վրայից: Այսպիսի զնդակոծումը թշնա-
մու շարքերում մեծ կորուստ ու խուճապ էր առաջացնում, առանձնա-
պէս հեծելազորի վրա հարձակվելու ժամանակ:



Նկ. VII

Մեր զորքերը նույնպէս յենթարկվել են ողային գրոհների: 1920 թ.
ընկ. Ժորու հեծյալ կորպուսն սպիտակների ինքնաթիռների կողմից
4 ուր զնդակոծվեց, վորի ժամանակ կարմիր զորքերը կորուստներ կրե-
ցին գլխավորապէս նրա համար, վոր նրանք դեռ չգիտէին, թե ինչ-
պէս պետք է կռվել ողային թշնամու դեմ: 1920 թ. ամռանը լեհերն
իրենց ավիացիան բաց թողին 1-ին հեծյալ բանակի վրա: Սակայն հե-
ծյալ բանակի մարտիկները վարպետորեն դործի անցան և մի որովա
ընթացքում վայր գցեցին լեհական 4 ինքնաթիւ:


Ապագա պատեւազմում հրոսողներն առավել ևս մեծ չափով կզոր-
ծադրվեն այն պատճառով, վոր իրենց դեմ կռիվը բարդ ու դժվարին
զործ և զորքերն ստիպված են շարունակ արթուն լինել, աչալուրջ կեր-
պով հսել յերկինքը և տեղը լավ ողտադործել՝ թշնամու ինքնաթիւ-
ների կրակից պաշտպանվելու համար (շարժման մասնատում, թա-
գրատացների ողտադործում, հրամանների արագ կատարում, կայուն
գիտցիկայինա):

Յաճախ բարձունքից դործող հրոսողների ամենամեծ վտանգը յերկ-
րից տրվող զնդացիքային և հրետանային ուժեղ կրակն է: Ուստի յերկ-
րային կրակից պաշտպանվելու համար՝ ինքնաթիւի ավելի պատասխա-
նատու տեղերը՝ մոտորները, նստելու տեղերը զրահապատում են:
Այնուամենայնիվ՝ համարյա վոչ մի կապիտալիստական յերկիր դեռ ևս
լավ տիպի հրոսող չունի:

ՈՒՍՏՈՂԱԿ ԱՎԻԱՑԻԱ

Ավիացիան կատարում է վոչ միայն մարտական աշխատանք, այլ
վորպէս շարժման միջոց, նույնպէս ողտադործվում և ավիացիոն մար-

տական մասերի և յերկրային զորքերի սպասարկման համար: Փոխադրական ծանր ինքնաթիռներն այն ժամանակ կարող են ուղղամթերք հասցնել ճակատ, յերբ սալլերով կամ ավտոտրանսպորտով կատարվող փոխադրությունն ընդհատվում է, կամ անբավարար է լինում: Սանիտարական ինքնաթիռները ծանր վիրավորներին և հիվանդներին տեղափոխում են բուժօժանարկներ՝ նրանց անհրաժեշտ ոգնություն ցույց տալու համար: Կապի թեթև ինքնաթիռները հեշտացնում են հրամանատարության կողմից զորքեր կատարելու գործը, հասցնելով կարգադրություններ ու հրամաններ, մեկ տեղից մյուսը փոխադրելով հրամանատարներին՝ կարգադրությունները զորամասերին հաղորդելու և մարտական հանգամանքները տեղն ու տեղը պարզաբանելու համար:



Նկ. VIII

Հատուկ նշանակություն ունեն տրանսպորտային ինքնաթիռները, վոր ապագա պատերազմում մեծ գործադրություն կունենան: Հնարավորություն ունենալով 3—4 անգամ պահեստ դալու և վերադառնալու, մի մեքենան որակյա 4 տոնն ուղմարեռ և հասցնում: Վորովհետև հրաձիգ կորպուսն որակյա միջին թվով 15000 արկ և 2,5 միլիոն փամփուշտ է բանեցնում, հետևապես այս պաշարը յերկաթուղով փոխադրելու համար կպահանջվի մոտ 20 վազոն, իսկ խճուղիով՝ մոտ 300 ավտոմոբիլ մի վոտքի համար: Մինչդեռ այդ ուղմամթերքն ինքնաթիռներով տեղափոխելու համար հարկավոր է վոչ ավելի՝ քան 60—70 մեքենա, և ինքնաթիռները վերօհիշյալ բեռը յերկու անգամ ավելի ճանապարհ կտանեն: Այսպիսով՝ տրանսպորտային մի ինքնաթիռը փոխարինում է 8—10 կիսա-ապրանքատար ավտոմոբիլի:

Տրանսպորտային ինքնաթիռների գործադրումը խիստ կարևոր է որպային մարտական ուժերի համար, վորոնք չափազանց մեծ քանակությամբ ուղմական պաշար են գործածում և պետք է արագ կերպով կենտրոնանան նոր շրջաններում՝ թշնամուն ուժեղ ու անսպասելի հարվածներ հասցնելու համար: Մի ուայնում գործող 500 հրատոդներից մի որվա լարված աշխատանք կատարելու համար կպահանջվի 20 ցի-


տերն վառելանյութ, 35—40 վազոն ուումը և մի վազոն փամփուշտ, այսինքն՝ 3 անգամ ավելի ուղմապաշար, քան հրաձիգ կորպուսի համար է պահանջվում: Պարզ բան է, վոր տրանսպորտային ինքնաթիռներն այս բեռն ավելի շուտ տեղ կհասցնեն և մեքենա յեկ քիչ կպահանջվի:

Ավելի մեծ նշանակություն է ստանում սանիտարական ինքնաթիռների աշխատանքը, վորոնք վիրավորներին արագ կերպով հասցնում են բուժօժանարկներ, վորտեղ նրանք անմիջապես բժշկական ոգնություն են ստանում: Սովորաբար ինքնաթիռը հարմարեցված է 2—3 պառկած և նստած մարդ տեղափոխելու համար. բացի այդ, ունի նաև ուղեկցի տեղ:

Վերջապես՝ չափազանց պատասխանատու աշխատանք են կատարում կապի ինքնաթիռները: Կապի ինքնաթիռը հանգիստանում է պետերի անձնական արագ հաղորդակցության և զորքերի հետ կապ պահպանելու լավագույն միջոցը: Մեզնում փորձնական թեթև ինքնաթիռների նմուշներ չատ են կառուցված, վորոնք «ափիետկա» անունն են կրում: 1930 թվի սուուգման ժամանակ այդ ավիետկաները խոշոր արդյունք տվին—3000 կիլոմետր ճանապարհ կտրեցին և միջին արագությամբ՝ ժամը 150 կիլոմետր, հաջողությամբ հաղթահարեցին յեղանակի դժվարին պայմանները:

ՈՂԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմպերիալիստական պատերազմից հետո ողադնացությունը մեծ դարդացում չգտավ: Բաղադրացիական կոնվների ժամանակ ողադնացություն ջոկատները հաջողությամբ աշխատում էյին հրետանու, զրա-



Նկ. IX

հապատ դնացքի և դետային տարվելու համար: Բացի այդ, տերատուները հսկում էյին ծովի ավերիք և փրկամանակին զգուշացնում իրենց նավատորմին ու ծովային պաշտպանությունը՝ թշնամու նավերի յերեան դալու մասին:



Կոլի թիկունքի և խոշոր արդյունաբերական կենտրոնների վրա ուղային հարձակումների հարաճուն վտանգն ստիպեց ուղային թշնամուց պաշտպանվելու նոր միջոցներ փորձել: Այս միջոցների թվում առանձնապես ոգտակար հանգիստացան փոքրածավալ կապովի (привязные) անրոստատները: Սրանց ուղևորթյամբ ողի մեջ կարելի չէ այնպիսի արգելակներ կառուցել, վորոնք թույլ չեն տա թշնամու ինքնաթիռներին թռչել դեպի պաշտպանվող կետը: Անրոստատները կարող են բարձրանալ մինչև 2000—3000 մետր, վերցնելով մետաղյա թելերի բեռ: Թելերն ամրացվում են անրոստատները միացնող տրոսին (մետաղյա թելերից հյուսած պարան): Ստացվում է ցանցային արգելակ, վորին ընդհարվելիս թշնամու ինքնաթիռները սովորաբար խորտակվում են, վորովհետև մետաղյա թելերն ընկնում են պոռուտակին, փաթաթվում և կոտրում նրա թաթերը:

Կապով անրոստատների թերությունն իրենց դանդաղկոտությունն ու ծանրաշարժությունն է, վորի շնորհիվ լավ նպատակ են հանդիսանում կործանիչների գրոհի համար: Բացի այդ, անրոստատներն առանձին դադ-ջրածին են լցնում, վորը հեշտությամբ բոցավառվում է: Բոլոր այս թերությունները սաստիկ թուլացնում են անրոստատների նշանակությունը:

Ուղադնացության միջոցների շարքում առանձին տեղ են բռնում դերիթաբլները: Այս զիգանտ ողանավերը կարող են հսկայական տարածություն կտրել և իրենց հետ ունեցի մեծ պաշար վերցնել: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանական դերիթաբլներն արչափում էլին Անգլիայի վրա, ոմբակոծելով մայրաքաղաք Լոնդոնը: Դերիթաբլներն ոգտագործվում են նաև ծովային նավեր ուղեկցելու և վերջնապես սուզանավերից պաշտպանելու համար:

Պարզ բան է, վոր ապագա պատերազմի ժամանակ դերիթաբլները շատ մեծ գործածություն կունենան: Խորհրդային Միությունը պատրաստ պետք է լինի այդ դերիթաբլների դեմ կռվելու և միաժամանակ այդ միջոցն ոգտագործելու թե տնտեսական կարիքների և թե յերկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու համար:

ՌԱԶՄԱՌԴԱՅԻՆ ՈՒԺՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԲԳԿԻ-ի ոգոմաողային ուժերի առաջ ծառացած մարտական բարդ խնդիրները պահանջում են նաև համապատասխան կազմակերպում: Ուղային ուժերի հիմքն են կազմում ավիացիայի և ուղադնացության մարտական մասերը: Բացի այս մարտական մասերից, ԲԳԿԻ-ի ուղային ուժերի կազմի մեջ մտնում են սպասարկման առանձին ողաններ, հատուկ մատակարարման պահեստներ և արհեստանոցներ, վորոնք նորոգում ու սարքավորում են ինքնաթիռները: Թռիչքային և տեխնիկական կազմը պատրաստվում է հատուկ ուսումնական հիմնարկներում, վոր կազմը նույնպես մտնում են ԲԳԿԻ-ի ուղային ուժերի կազմի մեջ: Վերջապես՝ ինքնաթիռները կառարելադործելու, սպառազինելու և կահավորելու համար կան գլխավոր-տեխնիկական հիմնարկներ, իսկ թռչող կազմի ռազմական վերապատրաստման ղեկավարության և ուղային

նավատորմը կոլի ժամանակ կառավարելու համար՝ կառավարող ողաններ:

Իր հերթին մարտական մասերից կազմակերպվում են եսկադրիլներ, բրիգադներ և ջոկատներ: Ջոկատն ամենափոքր միավորն է, վոր ընդունակ է կատարել դորքի ու հրամանատարության սպասարկման մարտական աշխատանքները: Ջոկատի կազմի մեջ են մտնում մինչև 10 հատ գործող ինքնաթիռ: Առանձին ավիոջոկատներ տրվում են խոշոր գորական միավորություններին (վոչ պակաս դիվիզիայից)՝ նրանք սովորաբար անմիջականորեն յենթարկվում են կորպուսի շտաբի պետին: Պատերազմի ժամանակ ամեն մի ջոկատ առանձին ողակայանում աշխատելու համար ամեն տեսակի անհրաժեշտ միջոցներ և ունենում: Այս նպատակով ջոկատն ունենում է տեխնիկական և ընդհանուր զորական համապատասխան տնտեսություն:

Հետախույզ ավիացիայի այն մասերը, վորոնք նշանակվում են բարձրագույն շտաբներին սպասարկելու համար, կոչվում են եսկադրիլներ: Եսկադրիլը բաղկացած է 3 անբաժան ջոկատից և ունի մարտական մեծացրած կազմ:

Ուղային մարտական ուժերի մեջ, վորոնց կազմի մեջ են մտնում կործանիչ, ոմբակոծիչ և հրոսող ավիացիան, կազմակերպչական գլխավոր միավորը նույնպես եսկադրիլիան է հանդիսանում: Վորովհետև ուղային մարտական ուժերը լավագույն արդյունք են տալիս միայն կոլի մեջ մասնաշաղկան կերպով ոգտագործվելիս, ուստի առանձին եսկադրիլները դասվում են բարձրագույն ավիացիոն միավորություններին՝ ավիաբրիգադների շարքը: Սովորաբար ավիաբրիգադի մեջ լինում է վոչ պակաս քան 3 եսկադրիլ: Մարտական ավիամասերն սպասարկվում են հատուկ ողաններին՝ ավիապարկերի կոզմից, վորոնք հատկացվում են եսկադրիլներին ու բրիգադներին: Ավիապարկը դաշտային ողակայաններ կառուցելու համար հետախույզում և հարձար տեղ և ընտրում, գլխամթերք և պաշար է կրում, կատարում է գլխավոր դուլքի (ինքնաթիռ, մոտոր, սպառազինում) ընթացիկ նորոգումը, թիկունք է ուղարկում փչացած կամ անպետք դուլքը: Պարկի հատուկ խմբերն ողակայանում ոժանդակ աշխատանք են կատարում, ինքնաթիռներ են տեղափոխվում, պաշարում են տարերային աղետների (փոթորիկ, հրդեհ) դեմ և պաշտպանվում են յերկրային և ուղային հակառակորդից:

Ուղադնաց մասերի կառուցվածքը բարդ չէ. գլխավոր միավորը հանդիսանում է առանձին ողադնաց ջոկատը, վորի կազմի մեջ են մտնում մի հատ կապովի՝ գործող անրոստատ և դուլքի անհրաժեշտ պաշար: Միջանի ողադնաց ջոկատներ կազմում են դիվիզիոն: Ջոկատները կցվում են կորպուսին և ողադնործվում են գլխավորապես հրեպանին սպասարկելու և կոլի դաշտը դիտելու համար: Թշնամու կործանիչներից պաշտպանվելու համար անրոստատի զամբյուղի մեջ դրեդացիք է դրվում. բացի այդ, կազմակերպվում է գնդացիբային պաշտպանություն՝ յերկրի վրայից: Անրոստատների պաշտպանության գործը նույնպես տվյալ ռայոնում աշխատող կործանիչ ավիացիան է կատարում:

ՈՂԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄԸ

Ինքնաթիռի մարտական հատկություններն ու բեռնատարությունը, արագությունն ու թռիչքի տևողությունը կախված են սպառազինումից, սարքավորումից և մոտորից: Ահա թե ինչու ինքնաթիռի սպառազինման ու թռչելու հատկությունների բարելավման գործին խիստ մեծ ուշադրություն է դարձվում:

Մոտորն ինքնաթիռի սիրտն է, վորի անընդհատ և պարզորոշ աշխատանքից են կախված ինքնաթիռի բոլոր մարտական հատկությունները: Ռազմական ինքնաթիռների վրա դրված այժմյան ավիացիոն մոտորները բաժանվում են յերկու գլխավոր տեսակի՝ ողով սառեցվող



Նկ. X

ու 420—500 ձիու ուժ ունեցող մոտորների, և ջրով սառեցվող ու 500—1000 ձիու ուժ ունեցող մոտորների: Վերջին տարիներս արտասահմանյան տիպի միջանի մոտորների հզորությունն աճեց մինչև 1200—1800 ձիու ուժի:


Բացի մեծ հզորությունից, մոտորը պիտի ունենա մի շարք այլ հատկություններ: Նախ պահանջվում է, վոր նա նվազագույն քաշ ունենա: Այդ հնարավորություն է տալիս մեծ ուժի մոտորներ զնեղ առանց ծանրաբեռնելու ինքնաթիռը: Այժմ լավագույն մոտորները համարյա յերկու անգամ թեթև են, քան 1920—1925 թվերինը, և մի ձիու ուժին միայն 0,5 կիլոգրամ ծանրություն է ընկնում:

Մոտորն իր ուժը պետք է պահպանի նաև բարձրանալու դեպքում: Ինչպես գիտենք՝ բարձրանալու հետ ողը նոսրանում է, վորի պատճառով էլ նվազում է մոտորին վառելանյութ մատուցելը: Վորպեսզի մո-

տորն իր ուժը պահպանի, հատուկ գործիքներ են կիրառվում, վորոնք համեմատաբար ող են մատուցում: Հնորհիվ այս բանի, մոտորների ուժը մինչև 3000—5000 մետր բարձրության հասնելը չի թուլանում: Այդ բարելավումը մեծապես բարձրացրել է թռիչքի արագությունը: Վորովհետև մեծ բարձրության վրա ողն ինքնաթիռին քիչ է գլխադրում:

Վերջապես՝ մոտորից պահանջվում է, վոր աշխատանքի մեջ վրատահելի լինի և քիչ վառելանյութ ծախսի:

Մոտորի վառահելիությունն ամենից առաջ վորոշվում է յերկար ժամանակ անընդհատ աշխատելու ընդունակությամբ: Առաջ մոտորները սովորաբար առանց նորոգելու և մաքրելու աշխատում էին առնչադատ 40—50 ժամ: Այս ժամերն այժմ բարձրացել են մինչև 150—200 ժամի: Դրա հետ միասին՝ այժմյան մոտորները վառելանյութ քիչ են ծախսում և յերկար ժամանակ են ծառայում: Ծառայության ժամկետը 300—400 աշխատից բարձրացել է 800—1000-ի:



Նկ. XI

Մեր ինքնաթիռների վրա դրվում են ողով սառեցվող 480 ձիու ուժանոց և ջրով սառեցվող 600 ձիու ուժանոց մոտորներ:

Ողով սառեցվող մոտորները դրվում են գլխավորապես կործանիչ ինքնաթիռների վրա, իսկ ջրով սառեցվողները—մյուս բոլորի:

Ռազմական ինքնաթիռի սպառազինումը կախված է նրա մարտական նշանակությունից: Ողային կռիվ մղելու համար յուրաքանչյուր ինքնաթիռի անրաժան սեփականությունը հրազենն է: Այսպիսի զենք են թեթև և արագաձիգ փոքր տրամադճանի զնդացիրները, վորոնք ըրպելին 750 անգամ կրակում են: Այդ զնդացիրները յերկու տիպի յեն—անշարժ և շարժական (աշտարակաձև) հաստոցներով:

Առաջին տիպի զնդացիրները դրվում են ինքնաթիռի Ֆյուզելյաժների վրա՝ պոռուտակի արանքով դեպի առաջ կրակելու համար: Մեղնում գործ են ածվում ՊԵ —1 սեփական կառուցվածքի զնդացիրներ, վորոնք յետ չեն մնում մյուս ողանալանտորմի զնդացիրներից: Այս զնդացիրները կրակում են ձգանի հետ միացած և ինքնաթիռի զեկավարման բռնակին ամրացրած լծակը սեղմելու միջոցով: Նշանառու-

թյան համար տեղափոխվում և ամբողջ ինքնաթիւր, վորովհետեւ նշանոցը, վորով ողջովում և ողջուն, անշարժ և դրված:

